ՀԱԼԵՑՆՈՂԻ ԿՐԱԿԸ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. ՄԱՂ. 3:1-4

1 ահա նա գալիս է, ասում է Զօրաց Տէրը: 2 Եւ ո՞վ կդիմանա նորա գալու օրուան, եւ ո՞վ է նորա
*երեվալու ժամանակին կանգնողը, որովհետեւ ՆԱ **հալեցնողի կրակի պէս է,** և*
***լվացարարների օճառի պես**: 3 Եվ նա նստելու է իբրև արծաթ զտող և մաքրող: Եվ մաքրելու*
է Ղևիի որդիներին և նրանց զտելու է ոսկու և արծաթի պես, և նրանք արդարությամբ Տիրոջն
ընծա մատուցողներ կլինեն: 4 Եվ Տիրոջն ընդունելի կլինի Հուդայի և Երուսաղեմի ընծան,
ինչպես վաղեմի օրերին և նախկին տարիներին:

Ղուկաս 12:49 – Ես եկա որ կրակ գցեմ երկրիս վրա. եւ ի՞նչքան եմ կամենում, որ արդէն իսկ բորբոքուած լինի:

Եբր. 12:29 – Որովհետեւ մեր Աստուածը ոչնչացնող կրակ է:

I. ՀԱԼԵՑՆՈՂԻ ԿՐԱԿՆ ՈՒՆԻ ՇԱՏ ՀՍՏԱԿ ՆՊԱՏԱԿ – ՍՐԲԱԳՈՐԾՎԱԾ

ՆԱ <u>հալեցնողի կրակի պէս է</u>, և <u>լվացարարների օճառի պես</u>: (Ժավել)

1) Հալեցնողի կրակը գիտի ճիշտ այն, ինչը պետք է մաքրված լինի:

Փրկության երեք «փուլերն» են՝ դիրքային սրբացում, պրոգրեսիվ սրբացում և վերջնական սրբացում:

Ա Հով. 1:7 – Հիսուս Քրիստոսի <u>արյունը մեզ մաքրում է ամեն մեղքից</u>:

Բ Կոր. 7:1 – Արդ այսպիսի խոստումներ ունենալով, սիրելինե՛ր, հոգու և մարմնի ամեն պղծությունից <u>ինքներս մեզ մաքրենք</u> և սրբությունը Աստծու երկյուղով կատարյալ դարձնենք:

2) Այն հեռացնում է բոլոր անմաքրությունները և մաքրման աշխատանք է կատարում:

- *Կրոնը երբեք չի մաքրում մարդկանց, այլ միայն կարող է վկայել մաքրված կյանքի մասին... Իսկ ինչպե՞ս կմեկնաբանես Ղուկաս 17-ում նշված 10 բորոտների փորձառությունը:*

3) Մաքրման համար առաջին առաջնահերթությունը կլինի քահանայությունը, իսկ հետո՝ ժողովուրդը (Մաղաքիա 2:3–4):

3 Եվ մաքրելու է <u>Ղևիի որդիներին</u> և նրանց զտելու է ոսկու և արծաթի պես, և նրանք արդարությամբ Տիրոջն ընծա մատուցողներ կլինեն:

Եվ Տիրոջն ընդունելի կլինի <u>Հուդայի և Երուսաղեմի ընծան</u>...

II. ՊԱՏՎԱԿԱՆ ԱՆՈԹ – ԸՆՏՐՎԱԾ:

*Բ Տիմ. 2:20-21 – **20** Մեծ տան մեջ ոչ միայն ոսկյա ու արծաթյա անոթներ կան, այլև փայտյա և խեցե: Կան, որ պատվավոր գործածության համար են, և կան ոչ պատվավոր գործածության համար: **21** Եթե մեկն ինքն իրեն այդպիսի բաներից մաքրի, կդառնա պատվական անոթ՝ սրբագործված ու իր Տիրոջն օգտակար, պատրաստ ամեն բարի գործի:*

#1. Պատվո անոթը կրակի փորձությունից դուրս է գալիս փառքով ու պատվով:

*Դանիել 3:23-25 – **23** Եվ այս երեք մարդիկ՝ Սեդրաքը, Միսաքը և Աբեդնագովը, կապված ընկան կրակով բորբոքված հնոցի մեջ: **24** Այդ ժամանակ Նաբուգոդոնոսոր թագավորն ապշած և շտապելով վեր կացավ և խոսեց՝ իր խորհրդականներին ասելով. Մի՞թե մենք կապված երեք մարդ չգցեցինք կրակի մեջ: Նրանք պատասխանեցին թագավորին և ասացին. Ստույգ է, ո՛վ թագավոր: **25** Նա էլ ասաց. Ահա ես չորս արձակ մարդու եմ տեսնում, որ շրջում են կրակի մեջ, և նրանց վնաս չի լինում. չորրորդի կերպարանքն էլ աստվածների որդու է նման:*

#2. Թշնամին չի կարող վերցնել այն, ինչ պատկանում է Աստծուն:

*Դանիել 5:2-6, 23, 25-28 – **2** Երբ գինին էր համտեսում, Բաղդասարը հրամայեց, որ բերեն ոսկե և արծաթե այն անոթները, որոնք Երուսաղեմի տաճարից վերցրել էր իր հայրը՝ Նաբուգոդոնոսորը, որպեսզի նրանցով խմեն թագավորը և նրա մեծամեծները, նրա կանայք և նրա հարճերը: **3** Այդ ժամանակ բերեցին ոսկե այն անոթները, որոնք վերցրել էին Երուսաղեմում գտնվող Աստծու տաճարից, և նրանցով խմեցին թագավորը և նրա մեծամեծները, նրա կանայք և նրա հարճերը: **4** Խմեցին գինին և գովեցին ոսկե ու արծաթե, պղնձե, երկաթե, փայտե և քարե աստվածներին: **5** Այդ պահին մարդկային ձեռքի մատներ երևացին և աշտանակի դիմաց գրեցին թագավորական պալատի պատի ծեփի վրա: Եվ թագավորը տեսավ այն ձեռքը, որը գրում էր: **6** Այդ ժամանակ թագավորի գույնը փոխվեց, և նրա խորհուրդները խռովեցին նրան, նրա մեջքի հոդերը քանդվում էին, իսկ նրա ծնկները մեկմեկի էին խփում:*

__23__ Այլ քեզ բարձրացրիր երկնքի Տիրոջ դեմ, և նրա տան անոթները բերվեցին քո առաջ, և դու, քո մեծամեծները և քո կանայք ու քո հարճերը գինի խմեցիք նրանցով: Եվ գովաբանեցիր արծաթե ու ոսկե, պղնձե, երկաթե, փայտե և քարե աստվածներին, որոնք ո՛չ տեսնում են, ո՛չ լսում, ո՛չ էլ իմանում: Բայց չփառավորեցիր այն Աստծուն, որի ձեռքում է քո շունչը, որինն են քո բոլոր ճանապարհները: __24__ Ուստի այն ձեռքն ուղարկվեց նրա կողմից, և այս գրվածքը գրվեց: __25__ Եվ այս է գրված այն գրությունը՝ **ՄԵՆԵ, ՄԵՆԵ, ԹԵԿԵԼ ՈՒ ՓԱՐՍԻՆ:** *__26__ Այս է խոսքի մեկնությունը. Մենե՝ Աստված հաշվեց քո թագավորության օրերը և այն վերջացրեց. __27__ Թեկել՝ կշեռքով կշռվեցիր և պակաս գտնվեցիր. Փարես՝ բաժանվեց քո թագավորությունը և տրվեց մարերին ու պարսիկներին:*

III. ԻՆՉՔԱՆ ԵՆՔ ՈՒԶՈՒՄ, ՈՐ ՄԵՐ ՄԵՋ ՀԱԼԵՑՆՈՂԻ ԿՐԱԿԸ ՎԱՌՎԻ:

Բ Տիմ. 1.6 – Այդ պատճառով էլ հիշեցնում եմ քեզ, որ <u>վառ պահես</u> այն պարգևը, որ Աստված քեզ տվեց:

Ա Թես. 5:19 – Հոգին մի՛ մարեք:

Եփեսացիս 4:30 – Եվ մի՛ տրտմեցրեք Աստծու Սուրբ Հոգուն, որով կնքվեցիք փրկության օրվա համար:

«Դարձեք կրակոտ և եռանդուն, և մարդիկ մղոններ կանցնեն, որպեսզի գան և տեսնեն, թե ինչպես եք դուք վառվում»: Ջոն Վեսլի

Ղև. 6:12 - 12 Եւ սեղանի վրայի կրակը նորա մէջ վառած պիտի լինի, պիտի չհանգչի. Եւ քահանան ամեն առաւօտ նորա վրա փայտեր այրէ, եւ ողջակէզը նորա վրա շարէ եւ այրէ նորա վերա խաղաղութեան զոհերի ճարպը:

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: